ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, PSYCHOLOGY, ПСИХОЛОГИЯ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՎԻՐՏՈՒԱԼ ՇՓՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ *

ՀՏԴ 159.9 *DOI: 10.52063/25792652-2023.2.17-137*

ԼՈՒՍԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
ընդհանուր հոգեբանության ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
lusine.ghazaryan@ysu.am
ORCID: 0009-0008-3378-8005

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել երիտասարդների շրջանում վիրտուալ շփման առանձնահատկությունները, դրանց ներգործությունը սոցիալական տվյալ խմբի հոգեբանական առանձնահատկությունների, կենսակերպի և սոցիալականացման վրա: Այդ նպատակով իրականացվել է գրականության և փաստաթղթերի վերլուծություն, փորձագիտական հարցում և հատուկ մշակված հարցարանի միջոցով սոցիոլոգիական հարցում երիտասարդների շրջանում՝ պարզելու վիրտուալ շփման դերը վերջիններիս կյանքում:

Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ վիրտուալ շփումը մեծ ներգրավվածություն ունի երիտասարդների կյանքում, ինչը վերջիններիս մոտ կարող է պատճառ հանդիսանալ մի շարք սոցիալ-հոգեբանական խնդիրների առաջացման: Վիրտուալ շփումը նաև որոշակի կախվածություն է առաջացնում սոցիալական նշված խմբի մոտ՝ դառնալով բնականոն և զրկելով վերջիններիս վիզուալ շփումներից, դեմ առ դեմ հանդիպումներից: Այս ամենի հետևանքով շատերը դառնում են ագրեսիվ, ոչ սթրեսակայուն, կորցնում են իրականության հետ կապը, խաթարվում են վերջիններիս հարաբերությունները ընտանիքի անդամների, ծնողների հետ: Վիրտուալ շփման չարաշահումն իր բացասական ազդեցությունն է ունենում նաև ուսուցման գործընթացի վրա. երիտասարդների գերակշիռ մասն օրվա մեծ մասն անց է կացնում տարատեսակ սոցիալական ցանցերում, ինչի հետևանքով ֆիզիկապես ունակ չի լինում զբաղվելու կրթությամբ: Հարկ է նկատել, որ վիրտուալ շփումը բազմաթիվ դեպքերում գրավում է երիտասարդներին, վերջիններս փորձում են այս կերպ ձեռք բերել նոր ընկերներ, համախոհներ:

Անշուշտ, վիրտուալ շփումը ժամանակակից կյանքի բաղկացուցիչ մասն է, և դրանից հրաժարվելը գրեթե անհնար կարելի է համարել, սակայն շփման այս եղանակը պետք է լինի բալանսավորված, որևէ կերպ չի կարելի թույլ տալ, որ այն դառնա կենսակերպ՝ ստիպելով հրաժարվել դեմ առ դեմ, վիզուալ

* Հոդվածը ներկայացվել է 05.05.2023թ., գրախոսվել՝ 08.07.2023թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2023թ.:

շփումներից: Այս համատեքստում, մեր համոզմամբ, մեծ է ընտանիքի, սոցիալական միջավայրի ազդեցությունը: Վիզուալ շփումը չարաշահող երիտասարդը որևէ պարագայում չպետք է իր խնդրի հետ մենակ մնա, վերջինիս պետք է հոգեբանական աջակցություն, ընտանիքի, ընկերների կողմից ուղղորդում: Կարծում ենք՝ երիտասարդ տարիքում սոցիալականացման դժվարությունները մեծ ազդեցություն կարող են ունենալ մարդու հոգեբանության վրա, ուստի հիմնախնդիրը կարևոր է, պահանջում է լուրջ հետազոտություն և համակարգային հաղթահարման մեխանիզմներ, որոնք թույլ կտան այս կամ այն կերպ չեզոքացնել երիտասարդների կախվածությունը նման տիպի կոմունիկացիայից:

Հիմնաբառեր՝ *սոցիալականացում, վիրտուալ իրականություն, համացանցային կախվածություն, սոցիալական ցանց, հաղորդակցություն, մեդիագրագիտություն, երիտասարդ, ագրեսիվություն, սթրես:*

Ներածություն

Արդի աշխարհում փոխվել են սոցիալական հաղորդակցման մեխանիզմները, ավանդական համարվող դեմ առ դեմ շփմանն ու հաղորդակցմանը եկել է փոխարինելու վիրտուալ հաղորդակցությունը: Հարկ է նկատել, որ հաղորդակցական կոմունիկացիայի նշված եղանակը առավել ընդունված ու պահանջված է հատկապես երիտասարդության շրջանում՝ զբաղեցնելով վերջիններիս օրվա մեծ մասը: Իսկ ի՞նչ է իրենից ենթադրում տեխնոլոգիաների միջոցով հաղորդակցությունը և ի՞նչ ռիսկեր կարող է պարունակել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ շփման նման եղանակը կայծակնային արագությամբ տարածվում է երիտասարդության շրջանում: Ասերկբայորեն կարելի է պնդել, որ համացանցը կլանել է երիտասարդների մեծ մասին՝ դառնալով 21-րդ դարի «վարակ»՝ կախվածության զգացողություն առաջացնելով նրանցից շատերի շրջանում: Բազմաթիվ երիտասարդներ հասկանում են, որ այդ «վարակն» իրենցից անասելի մեծ էներգիա է խլում, միևնույն ժամանակ շտապում են կարդալ հերթական ծանոթ-անծանոթի հաղորդագրությունները, ստեղծել նոր ծանոթություններ՝ այդպիսով «բնակություն հաստատելով» համացանցային տարատեսակ հավելվածներում:

Սույն հոդվածում կփորձենք քննության առնել վիրտուալ հաղորդակցություն երևույթի էությունը, տարածվածության մակարդակը, դրական ու բացասական դիտանկյուններն ու հնարավոր ազդեցությունները մարդու ֆիզիկական և հոգեկան առողջության, արժեհամակարգի փոփոխությունների և աշխարհընկալման վրա:

Վիրտուալ շփման դերն ու նշանակությունը ժամանակակից երիտասարդների կյանքում

Վերջին տարիներին գրեթե բոլոր մարդկանց կյանք է ներխուժել համացանցը՝ դառնալով ժամանակակից կյանքի անբաժանելի մաս, առանց որի մեր օրերի կոմունիկացիաներն ու զարգացումները դժվար է պատկերացնել: Ժամանակակից հասարակությունը կենսագործունեության բոլոր բնագավառներում համատարած կախվածություն ունի տեխնոլոգիաներից և ինտերնետից: Արդյունքում նոր միտում է ի հայտ եկել՝ հասարակության վիրտուալացում, այսինքն՝ հիմնական գործունեությունը, այդ թվում՝ հաղորդակցությունը, տեղափոխվում է վիրտուալ տարածություն: Սխալված չենք լինի, եթե պնդենք, որ համացանցը վերջին տասը տարիների ընթացքում վերափոխել է աշխարհը, ձևավորել նոր մտածողություն, կյանքի հանդեպ նոր կարծրատիպեր ու հայացք է արմատավորել՝ հատկապես թիրախ դարձնելով երիտասարդներին: Համացանցը առաջ է բերում նաև անհատական հոգեբանական բնութագրերի շարք, ինչպիսիք են՝ ինքնավստահությունը,

անհանգստությունը, տրամադրության փոփոխությունները, որոնք ազդում են վարքի վրա (Сафуанов и Докучаева 89):

Բացի դրանից՝ համացանցը (ինտերնետը) կարելի է ընկալել նաև որպես իրականին այլընտրանք, պատրանքային աշխարհ, որտեղ կարելի է քիչ թե շատ հաջողությամբ պայքարել ինչ-որ երևույթների ու իրողությունների դեմ, հասնել որոշակի հաջողությունների, ինքնահռչակվել և որոշ ժամանակով հեռանալ իրական կյանքի խնդիրներից (Марцинковская 63-69): Համացանցային հնարավորությունները անսպառ են. բացի տեղեկատվական ահռելի աղբյուր լինելուց՝ համացանցը ժամանակակից մարդու համար գրադարան է, ամսագիր, հեռուստացույց, երաժշտություն լսելու, ֆիլմեր դիտելու միջոց, գնումներ կատարելու ձև, նույնիսկ «խաղահրապարակ»: Հատկապես երիտասարդների շրջանում համացանցը մեծ տարածում ունի որպես հաղորդակցական կոմունիկացիա, որն ապահովում է լոկալ և գլոբալ շփումներում ահռելի մեծ հնարավորություններ:

Հաղորդակցությունը կարելի է դիտարկել որպես մարդկանց միջև սոցիալական փոխազդեցության դրսևորման ձև, որի ընթացքում մարդկանց միջև հաստատվում և ձևավորվում են շփումներ, մշակվում և պահպանվում են ընդհանուր կանոններ և վարքագծի ռազմավարություններ: Հաղորդակցության հիմքը մարդկանց կարիքներն են՝ կենսապայմանների ապահովման, տեղեկատվության փոխանակման, ընդհանուր և անհատական առաջադրանքների իրականացման՝ ընդհանուր և անձնական նպատակների հասնելու համար: Միևնույն ժամանակ, հաղորդակցությունը կարող է իրականացվել մարդկանց կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում՝ մասնագիտական, բիզնես, սոցիալ-մշակութային, քաղաքական, անձնական հարաբերությունների ոլորտում (Сластенин и Каширин 480):

Ժամանակակից գիտությունը մեծ ուշադրություն է դարձնում հաղորդակցության խնդիրներին: Լ. Ի. Ռյումշինան հաղորդակցությունը սահմանում է որպես հազվագյուտ գիտական կատեգորիա: Հեղինակը մարդու կյանքը համարում է հաղորդակցություն՝ իր, ուրիշների, տարբեր մշակութային և պատմական աղբյուրների միջև: Հաղորդակցության բացակայությունը կամ դրա պակասը կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների (Рюмшиной 144): Հաղորդակցության և շփման շնորհիվ մարդը սոցիալականացվում է: Անձի սոցիալականացումը բնական գործընթաց է, որն ունի իր ներքին օրինաչափությունները: Հենց սոցիումի հետ շփման, հաղորդակցման, տարբեր տեսակի հարաբերությունների հաստատման վրա է հենվում անձի զարգացումը, կենսափորձի,հմտությունների, կարողությունների ձեռքբերումը: Ըստ գրող Ջեյմս Ֆադիմանի և փիլիսոփայության դոկտոր Ռոբերտ Ֆրեյգերի՝ «Սոցիալականացում կամ սոցիալիզացիա հասկացությունը մեկնաբանում են որպես շփման և գործունեության մեջ իրականացվող անհատի փորձի յուրացման և ակտիվ վերարտադրման գործընթաց և արդյունք» (Фейдимен и Фрейджер 217):

Հաղորդակցության մի տեսակ էլ հեռահաղորդակցությունն է, որը թույլ է տալիս տեղեկատվություն փոխանակել էլեկտրոնային սարքերի միջոցով: Նկատենք, որ ավանդական հեռահաղորդակցության տեսակները այլևս պահանջարկ չունեն, քանի որ ժամանակակից մարդն արդեն իսկ անկարող է ապրել առանց ցանցային կոմունիկացիոն միջոցների՝ Facebook, Twitter, Skype, MSN, ICQ, E-mail /էլեկտրոնային փոստ/ և այլն: Սակայն արդյոք վիրտուալ շփումը կարող է դիտարկվել որպես բնականոն սոցիալականացում, և ինչպիսի վտանգներ կարող է պարունակել այն: Այս համատեքստում որպես առաջնային հետևանք կարելի է դիտարկել այն հանգամանքը, որ համացանցային տարաբնույթ հարթակներում երիտասարդների շփումը կտրում է նրանց իրականությունից, մեկուսացնում իրական կյանքից՝ պարփակելով համացանցային տիրույթում: Համացանցի գերօգտագործումը կարող է հանգեցնել հոգեկան և հոգեբանական բազմաթիվ խանգարումների. անքնությունից մինչև սթրեսներ և գերլարված իրավիճակներ, իսկ վատագույն դեպքում՝ համացանցային կախվածություն:

Թերևս բոլորին ծանոթ է կախվածություն հասկացությունը, որը հանգեցնում է հետևանքային մի շարք քայքայող իրավիճակների: Տարածված կախվածությունների շարքում կարելի է դիտարկել նաև համացանցայինը, որն ունակ է կազմաքանդել անհատի կյանքը, նպատակները, մղումներն ու արժեքային համակարգը: Այս համատեքստում թիրախ կարելի է համարել երիտասարդներին, որոնք մեծապես հետաքրքրված են սոցիալական միջավայրի նոր պայմաններով և բավական անցնցում հարմարվել են կյանքի վիրտուալացմանն ու տեմպին: Ուսումնասիրող Ք. Յունգը նշում է, որ համացանցային կախվածություն կարող է ունենալ յուրաքանչյուրը, և որևէ ժողովրդագրական տարանջատում այս դեպքում չի կարող լինել: Համացանցային տարածությունն ունի մի մութ կողմ, որը ստիպում է մարդկանց, մոռանալով անձնականը, առողջությունն ու ընտանիքը, գերադասել իրենց ժամանակն անցկացնել համացանցում: Յունգը մատնանշում է անհատի այն գործողությունները, սոցիալական դերերը, որոնք անտեսվում են՝ ի շահ համացանցի: Մարդիկ պլանավորած գործողությունների փոխարեն զբաղվում են համացանցով (Young 79-72):

Մարդն իր բնույթով սոցիալական էակ է, սակայն ցանցային շփումը հարկադրում է ժամանակակից մարդուն հեռանալ իրականությունից, մարդկանցից, ինչը կարող է հակառակ արդյունքն ունենալ: Վիրտուալ տարածքը օգտատերերի համար անսահման հնարավորություններ է բացում ոչ միայն տեղեկատվություն ստանալու հարցում: Բացի որոնման ծառայություններից՝ մեծ պահանջարկ ունեն նաև սոցիալական ցանցերը, որոնք թույլ են տալիս ցանցում տեղադրել տարբեր տեքստեր և մեկնաբանություններ՝ հրապարակայնորեն կիսվել տեղեկություններով և կարծիքներով (Изотова 5):

Առաջին հայացքից կարող է թվալ, թե երիտասարդը, որ ակտիվ օգտվում է համացանցից, ունի տասնյակ ընկերների հետ լիարժեք շփում, չունի սոցիալականացման հետ խնդիրներ, այդուհանդերձ նույն երիտասարդը վիզուալ շփման ժամանակ կաշկանդվում է, բարդույթավորվում: Նկատենք, որ վիզուալ շփումն էապես տարբերվում է վիրտուալ շփումից: Համացանցային շփման վիրտուալ բնույթը փոխում է մարդկանց միջանձնային հարաբերությունները, ինչը, իր հերթին արտացոլվում է դրանց ըմբռնման և նկարագրության գործընթացների վրա: Այնպիսի նոր հասկացությունները, ինչպիսիք են friending-ը, flirting-ը, hatred-ը, liking-ը, following-ը, հստակորեն արտացոլում են համացանցային տարածքում միջանձնային հաղորդակցության եղանակների փոփոխման շարունակական գործընթացները, որոնք իրենց վրա կրում են տեխնոլոգիաների ընձեռած նոր հնարավորությունների և սահմանափակումների ազդեցությունը: Այս եզրերից յուրաքանչյուրը սահմանում է վիրտուալ հաղորդակցության տրամաբանությունը՝ ընդգծելով, որ վիրտուալ շփումը մարդկության համար ստեղծել է նոր մարտահրավերներ:

Բուն հաղորդակցման համար նախատեսված հավելվածներից բացի երիտասարդները մեծ ժամանակ են անցկացնում նաև սոցիալական ցանցերում, որտեղ նույնպես հնարավորություն ունեն շփվելու և հաղորդակցվելու:

Վիրտուալ սոցիալական ցանցը առցանց ծառայություն է, որը թույլ է տալիս մարդկանց միավորվել որոշակի սկզբունքով՝ նրանց տրամադրելով հաղորդակցման և ինքնադրսևորման հարմար գործիքներ: Վիրտուալ իրականությունը մեծապես կարող է փոխել երիտասարդ սերնդի մտածողությունն ու արժեքային համակարգը: Համացանցը չարաշահող երիտասարդը դառնում է ավելի ինքնամփոփ, ավելի քիչ է ակտիվ կյանքով ապրում, ինչի արդյունքում խաթարվում են վերջինիս բնականոն կենսագործունեությունն ու սոցիալականացումը: Տեղեկատվական հասարակության մեջ վիրտուալ հաղորդակցությունը հիմք է հանդիսանում մարդու լեզվի և մտածողության ձևավորման համար, որը գործում է զգալի տեղեկատվական հոսքերով և անհատի նախընտրելի միջավայրում, որտեղ տեղի է ունենում նրա հիմնական գործունեությունը:

Ինտերնետը մի կողմից հնարավորություն է տալիս արագորեն տեղեկություններ ստանալ, շփվել, սովորել, որոնել ինֆորմացիա, իրազեկվել, սակայն մյուս կողմից նույն արագությամբ այն տարածում է նաև բացասական, ոչ հավաստի տեղեկություններ և թափանցելով անհատի անձնական տարածք՝ թուլացնում է մարդու իրական սոցիալական կապերը: Ժամանակակից հետազոտությունները հաստատում են, որ ռիսկայնության խմբում մեծամասամբ հայտնվում են դեռահասներ ու երիտասարդներ, այդ առումով շատ կարևոր է հասկանալ կախվածության առաջացման պատճառներն ու հետևանքները, և ըստ այդմ էլ մշակել կանխարգելող միջոցներ (Հարոյան 32):

Վիրտուալ իրականության բացասական հատկանիշներից է նաև սեփական ցանկություններին համապատասխան իրականության ստեղծումը, որտեղ կարելի է առաջնորդվել այն օրենքներով, որոնք հարմար են օգտատիրոջը: Ավելին, երիտասարդության մեծ մասը վիրտուալ աշխարհում ստեղծված նորմերը տեղափոխում է իրական սոցիալական հարաբերությունների դաշտ: Կյանքում յուրաքանչյուր անձ ունի կոնկրետ սոցիալական կարգավիճակներ, սոցիալական դերեր, որոնք որոշակի հետք են թողնում վարքի, սովորությունների, ուրիշների հետ շփվելու, նրանց հանդեպ ունեցած վերաբերմունքի վրա: Վիրտուալ հաղորդակցության, շփման մեջ սոցիալական կարգավիճակը և դերերը, որոնք ներառում են արտաքին տեսք, տարիք, սեռ, սեռական կողմնորոշում, հետաքրքրություններ և այլն, մեծ դեր չեն խաղում, ուստի վիրտուալ շփումը բավական լավ հնարավորություններ է ստեղծում այն մարդկանց համար, որոնք իրական կյանքում ունեն որոշակի բարդույթներ կամ շփման պակաս: Ուստի տեղին կլինի նկատել, որ վիրտուալ շփումից հնարավոր կախվածության պատճառը ժամանակակից մարդու համար կարող է հանդիսանալ նաև մենակությունը: Այն մարդը, որ բավականաչափ շփվում է իր շրջապատի հետ, վիրտուալ աշխարհում զրուցակիցներ չի փնտրի:

Աշխարհի զարգացման ժամանակակից միտումները կապված են այնպիսի բնական, օբյեկտիվ, լայնածավալ սոցիալ-տնտեսական, մշակութային, քաղաքական, տրանսֆորմացիոն և անձնական գործընթացի հետ, ինչպիսին է գլոբալացումը: Այս գործընթացը փոփոխություններ է առաջացնում մարդկային կյանքի բոլոր ոլորտներում, քանի որ ավելի ու ավելի շատ երկրներ են ներգրավված այդ գործընթացում (Агузумцян 4): Գլոբալիզացիայի հետ մարդու կենսագործունեության անբաժանելի մաս է դարձել նաև վիրտուալ շփումը, որից որևէ կերպ խուսափելը գործնականում անհնար է: Որպես վիրտուալ շփման եղանակ, անշուշտ, համացանցային տարբեր հավելվածներն իսկական հրաշք կարելի է համարել, քանի որ հազարավոր կիլոմետրերի վրա այս տեխնոլոգիան հնարավորություն է տալիս շփվել, ձեռք բերել նոր ընկերներ ու ծանոթություն հաստատել և նույնիսկ տեսնել նորահայտ ծանոթին: Սակայն այս տեսանկյունից նույնպես ռիսկերն անվերահսկելի են: Բազմաթիվ անգամներ համացանցային ծանոթություններն ու վիրտուալ շփումներն ունեցել են անկանխատեսելի ավարտ: Բազմաթիվ երիտասարդներ ունեցել են սթրեսներ, հոգեբանական տրավմաներ, ընդհուպ մինչև մահ: Այս առումով կարևոր ու անկյունաքարային է երիտասարդների մեդիագրագիտության մակարդակը, քանի որ այն թույլ կտա, որ օգտատերը համացանցում չթիրախավորվի և անվտանգ լինի: Մեդիակրթության նպատակը՝ որպես ժամանակակից կրթության անբաժանելի մասի, դառնում է անձի մեդիակոմպետենտության, մեդիագրագիտության, մեդիամշակույթի ձևավորումը (Жижина 47):

Այսպիսով, վիրտուալ շփումը դիտարկելով որպես ժամանակակից երիտասարդության հաղորդակցման պահանջմունքի բավարարման և սոցիալականացման միջոց՝ կարող ենք պնդել, որ տեխնոլոգիական ռեսուրսը բավական լավ հնարավորություններ է ստեղծում երիտասարդների միջանձնային հաղորդակցման, տարատեսակ հարթակներում սեփական կարծիքն ու տեսակետը

արտահայտելու, ընկերական ու գործնական շփումների արագ ու արդյունավետ ապահովման համատեքստում: Սակայն հիմնահարցի գլոբալ ուսումնասիրումը թույլ տվեց արձանագրել նաև այն հանգամանքը, որ վիրտուալ շփումը, այդ թվում նաև տարատեսակ սոցցանցերի, հավելվածների նկատմամբ երիտասարդների՝ օրեցօր աճող հետաքրքրությունը իր մեջ մեծագույն ռիսկեր է պարունակում: Վիրտուալ շփումը գերադասող մարդիկ կարող են դառնալ համացանցի պատանդը: Համացանցի՝ չափից ավելի օգտագործումը մարդու համար կարող է ստեղծել մեկուսացման իրավիճակ և հանգեցնել միջանձնային հաղորդակցության չձևավորված նորմերի (Желонкина 220-224):

Բազմաթիվ դեպքերում երիտասարդները կորցնում են ինգնակարգավորման մեխանիզմները, տուրք տալիս իրենց հետաքրքրություններին, ինչի հետևանքով վիրտուալ իրականությունն ու վիրտուալ շփումը դառնում են բնականոն կենսակերպ, ոչ թե այլընտրանքային շփման ու ժամանցի տեսակ: Արդյունքում երիտասարդը կորցնում է իրականության հետ կապը, իրական կյանքում դադարում է ակտիվ շփումները ընկերների, մտերիմների հետ:

Հետազոտության արդյունքներ և եզրակացություն

Հիմնվելով տեսական վերլուծության եզրահանգման վրա՝ իրականացվեցին փորձագիտական հարցում և պիլոտային հետազոտություն թվով տասը ուսանողների և 10 հոգեբանների հետ: Ուսանողների հետ իրականացված հարցախույզը ցույց տվեց, որ ժամանակակից երիտասարդների հիմնական մասը նախապատվություն է տալիս վիրտուալ շփմանը /տե՛ս աղյուսակ 1/:

Աղյուսակ 1.

Երիտասարդների հարցման արդյունքների տոկոսային ցուցանիշները

Օգտվու՞մ եք արդյոք համացանցային հեռահաղորդակցության միջոցներից / Skype, Viber, Whatsapp, Telegram, Twitter, Facebook Messenger, Zoom և այլն:	Այո՝100% Ոչ՝0
Հաճա՞խ եք հանդիպում ընկերներին:	Այո՝ 40% Ոչ՝60%
Ունե՞ք արդյոք համացանցային կախվածություն:	Այո՝ 60% Ոչ՝ 40%
Ձեզ համարու՞մ եք մեդիագրագետ:	Այո՝30% Ոչ՝ 70%
Կարո՞ղ եք Ձեր օրը պլանավորել՝ առանց վիրտուալ շփման:	Այո՝30% Ոչ՝70%

Սույն հարցման արդյունքում պարզ դարձավ, որ հարցման մասնակից երիտասարդները մեծապես կարևորում են վիրտուալ շփումը՝ որպես ժամանակակից հաղորդակցական կոմունիկացիա, և հաղորդակցման այս տեսակը գերակշռում է, հանդիսանում է վերջիններիս շփման և հաղորդակցման պահանջմունքի բավարարման գործընթացը: Մեր կողմից արձանագրվեց, որ երիտասարդների շրջանում նկատվում է որոշակի կախվածություն համացանցային տարատեսակ հարթակներում և հավելվածներում շփվելու տեսանկյունից, ինչի հետևանքով նկատելիորեն տուժում է վիզուալ հաղորդակցությունը:

Հոգեբանների հետ իրականացված հետազոտության արդյունքները ներկայացված են նկար 1-ում.



Նկար 1. Հոգեբանների հարցման արդյունքների տոկոսային ցուցանիշները

Հոգեբանների շրջանում իրականացված հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ որ վերջիններիս մասնագիտական դիտարկումները հիմնականում համընկնում են: Հարցման մասնակից հոգեբանները հիմնականում մատնանշում էին, որ թեև վիրտուալ շփումը բավական հարմար ու հասանելի հաղորդակցական կոմունիկացիա է, այդուհանդերձ ժամանակակից երիտասարդների կողմից այն հիմնականում չարաշահվում է՝ բացասական ազդեցություն ունենալով վերջիններիս բնականոն կենսագործունեության վրա: Կարծում ենք, որ այս հետազոտությունը ևս գալիս է փաստելու, որ հիմնախնդիրն ունի սուր անկյուններ և վերահսկողական մեխանիզմների կիրառման անհրաժեշտություն:

Այսպիսով, համաձայն մեր հետազոտության արդյունքների՝ փորձենք համակարգել և ընդհանրացնել վիրտուալ շփման դրական ու բացասական ազդեցությունները երիտասարդների վրա.

- Վիրտուալ շփումը մարդկանց հնարավորություն է տալիս շփվել տարատեսակ մարդկանց հետ՝ անկախ նրանց սոցիալական կարգավիճակից, ինչի արդյունքում հսկայական կենսափորձ է կուտակվում:
- Շփման այս եղանակը երիտասարդներին թույլ է տալիս հեշտությամբ գտնել համախոհներ, ընդհանուր հետաքրքրություններ և հայացքներ ունեցող զրուցակիցներ:
- Վիրտուալ հաղորդակցությունը նպաստում է ժամանակի և մի շարք այլ ռեսուրսների խնայմանը:
- Երիտասարդների համար համացանցային հաղորդակցման միջոցների չարաշահումը հանգեցնում է մեկուսացման, անտարբերության և ցածր հուզականության, տարատեսակ բարդույթների զարգացման:
- Վիրտուալ շփումը հաճախ նպաստում է անպատժելիության և դաժանության զգացողության զարգացմանը (վիրտուալ շփման մեջ ագրեսիվ վարքի բնական սահմանափակումներ չկան, որոնք առկա են իրական շփման մեջ):

Այսպիսով, վերջին 25-30 տարվա տեխնոլոգիական նորույթ համարվող համացանը բազմաթիվ երիտասարդների համար դարձել է էլեկտրոնային հաղորդակցության միջոց՝ միաժամանակ ստեղծելով վիրտուալ իրականություն:

Երիտասարդության վիրտուալ շփման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները և դրսևորման միտումները դարձել են երիտասարդների կենսագործունեության (ուսման, աշխատանքի, ժամանցի և այլ) իրական

անբաժանելի մաս, որին հարմարվելը նոր մարտահրավերներ է ստեղծում հոգեբանական հետազոտությունների համար:

Վիրտուալ հաղորդակցության խնդիրն այսօր առավել քան արդիական է դարձել հատկապես երիտասարդների շրջանում, որոնցից ամենաակնառուն ու վտանգավորը կախվածությունն է: Կարծում ենք, որ պետք է մեծ ուշադրություն դարձվի հենց երիտասարդներին, քանի որ նրանք են մեր պետության ապագան: Անհրաժեշտ է պետության ուշադրությունը հրավիրել այս խնդրի վրա, քանի որ վիրտուալ հաղորդակցության ծավալայնությունը ժամանակի ընթացքում կարող է վերածվել պետության հիմնական գաղափարների և սկզբունքների սպառնալիքի՝ կազմաքանդելով երիտասարդների հոգեբանական առանձնահատկությունները, զգայականությունն ու աշխատունակությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարոյան, Նելլի. «Սոցիալական ցանցերի ազդեցությունը դեռահասների և երիտասարդների սոցիալականացման գործընթացի և արժեհամակարգի ձեվավորման վրա». *Հոգեկան առողջության հայկական հանդես* 8(2), Երևան, 2017:
2. Агузумцян, Рубен и Мурадян, Елена. «Психологическая безопасность личности в эпоху глобализации». *Արդի հոգեբանություն գիտական հանդես* N1(8), 2021.
3. Жижина, Марина. «Медиаграмотность как стратегическая цель медиаобразования: о критериях оценки медиакомпетентности». *Медиаобразование*. Москва, 2016. N4.
4. Желонкина, Ольга. «Социально-психологические особенности юношества, обусловленные виртуальным общением». *Вестник*. Краснояр. гос. пед. ун-та. Педагогика. 2012, N5.
5. Изотова, Елена. «Инструменты эмоциональной насыщенности интернет-сообщения: эмоциональный интеллект и способы кодирования эмоций». *Психологические исследования*, Москва, 2014, Т. 7. N37.
6. Марцинковская, Татьяна. «Психология пространства: от вселенной до личности, от экосферы до экзисферы». *Жизненное пространство в психологии: Теория и феноменология: сборник статей*, под ред. Н.В. Гришиной, С.Н. Костроминой. СПб.: Изд-во Санкт-Петербургского университета, 2020. стр. 63–99.
7. Рюмшина, Любовь. *Прикладная психология общения и межличностного познания*. коллективная монография. М.: Кредо, 2015.
8. Сафуанов, Фарит и Докучаева, Наталья. «Особенности личности жертв противоправных посягательств в Интернете». *Психология и право.* Москва, 2015. N4. стр. 80-93.
9. Сластёнин, Виталий и Каширин, Владимир. *«Психология и педагогика»*. учеб. пособие для студ. высш. учеб. заведений. Москва, Издательский центр «Академия», 2001.
10. Фейдимен, Джеймс и Фрейджер, Роберт. *Личность и личностный рост*. Москва, 1993.
11. Young, Kimberly. *Caught in the Net: How to Recognize the Signs of Internet Addiction--and a Winning Strategy for Recovery*, 1998, NewYork.

WORKS CITED

1. Haroyan, Nelli. Socialakan canceri azdecut'yuny' der'ahasneri ev eritasardneri socialakanacman gorc'y'nt'aci & arjhehamakargi d'evavorman vra. *Hogekan ar'oghjut'yan haykakan handes* 8(2). Erevan [The Impact of Social Networks in the Process of

Socialization and the Formation of Value Systems of Adolescents and Adults, Yerevan] 2017. (In Armenian)

2. Aguzumcjan, Ruben i Muradjan Elena. Psihologicheskaja bezopasnost' lichnosti v jepohu globalizacii. *Ardi hogebanowt'yun Gitakan handes* N 1(8) [The Psychological Safety of Personality In the Age of Globalization, Yerevan] 2021. (In Russian)

3. Zhizhina, Marina. Mediagramotnost' kak strategicheskaja cel' mediaobrazovanija: o kriterijah ocenki mediakompetentnosti. *Mediaobrazovanie*. N4, Moskva [Media Literacy as a Strategic Goal of Media Education: On the Criteria for Assessing Media Competence, Moscow] 2016. (In Russian)

4. Zhelonkina, Ol'ga. Social'no-psihologicheskie osobennosti junoshestva, obuslovlennye virtual'nym obshheniem, *Vesn*. Krasnojar. gos. ped. un-ta. Pedagogika. N5 [Socio-Psychological Peculiarities of Youth Caused by Virtual Communication, Krasnoyarsk] 2012. (In Russian)

5. Izotova, Elena. Instrumenty jemocional'noj nasyshhennosti internet-soobshhenija: jemocional'nyj intellekt i sposoby kodirovanija jemocij. *Psihologicheskie issledovanija*. [Tools of Emotional Saturation of an Internet Message: Emotional Intelligence and Ways of Coding of Emotions, Moscow] 2014, T. 7. N37. (In Russian)

6. Marcinkovskaja, Tat'jana. Psihologija prostranstva: ot vselennoj do lichnosti, ot jekosfery do jekzisfery. Zhiznennoe prostranstvo v psihologii: Teorija i fenomenologija: sbornik statej, Pod red. N.V. Grishinoj, S.N. Kostrominoj. SPb.: Izd-vo Sankt-Peterburgskogo universiteta, [Psychology of Space: from the Universe to the Individual, from the Ecosphere to the Exosphere, Saint Petersburg] 2020, pp. 63-99. (In Russian)

7. Rjumshina, Ljubov'. Prikladnaja psihologija obshhenija i mezhlichnostnogo poznanija: kollektivnaja monografija. M.: Kredo [Applied Psychology of Communication and Interpersonal Cognition: Collective Monograph, Moscow] 2015. (In Russian)

8. Safuanov, Farit i Dokuchaeva Natal'ja. Osobennosti lichnosti zhertv protivopravnyh posjagatel'stv v Internete. *Psihologija i pravo* [Personality Characteristics of Victims of Illegal Attacks on the Internet, Moscow] 2015, N4, pp. 80-93. (In Russian)

9. Slastjonin, Vitalij i Kashirin Vladimir, Psihologija i pedagogika: ucheb. posobie dlja stud. vyssh. ucheb. zavedenij. Moskva, Izdatel'skij centr «Akademija». [Psychology and Pedagogy, Moscow] 2001. (In Russian)

10. Fejdimen, Dzhejms i Frejdzher Robert. Lichnost' i lichnostnyj rost. Moskva. [Personality and Personal Growth, Moscow] 1993. (In Russian)

SOCIO-PSYCHOLOGICAL CHARACTERISTICS AND TRENDS IN YOUTH VIRTUAL COMMUNICATION

LUSINE GHAZARYAN

Yerevan State University, Faculty of Philosophy and Psychology,
Chair of General Psychology, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

The goal of this research is to examine the characteristics of young people's virtual communication, their impact on the psychological characteristics, lifestyle and socialization of a given social group. In order to determine the function of virtual communication in young people's lives, a literature and document analysis, an expert survey, and a sociological survey were all conducted for this goal.

As a result of the study, it became clear that virtual communication has a great involvement in the lives of young people, which can cause a number of socio-psychological problems in the latter. Virtual contact also causes a certain dependence

among the specified social group, becoming normal and depriving them of visual contact and face-to-face meetings. Hence, they become aggressive, not resistant to stress, lose touch with reality, their relations with family members and parents are disturbed. The misuse of virtual interaction is detrimental to learning as well. The majority of young people spend the bulk of their waking hours on various social media platforms, which prevents them from physically participating in educational activities. It should be noted that virtual communication in many cases attracts young people, the latter try to make new friends and like-minded people in this way.

Of course, virtual communication is an integral part of modern life, and it can be considered almost impossible to refuse it, but this method of communication must be balanced, it cannot be allowed to become a way of life, forcing people to refuse face-to-face, visual contacts. In this context, we believe, the influence of family and social environment is great. A young person who abuses visual contact should not be left alone with his problem under any circumstances; he needs psychological support, guidance from family and friends. We think that socialization difficulties at a young age can have a great impact on human psychology, so the problem contains great risks and requires serious research, systemic coping mechanisms that will allow one way or another to neutralize young people's addiction to this type of communication.

Keywords: *socialization, virtual reality, Internet addiction, social network, communication, media literacy, young, aggressiveness, stress.*

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ХАРАКТЕРИСТИКИ И ТЕНДЕНЦИИ ПРОЯВЛЕНИЯ ВИРТУАЛЬНОГО ОБЩЕНИЯ МОЛОДЕЖИ

ЛУСИНЕ КАЗАРЯН
соискатель кафедры общей психологии
факультета философии и психологии
Ереванского государственного университета,
Ереван, Республика Армения

Целью данного исследования является изучение особенностей виртуального общения молодежи и того, как данное общение влияет на их психологию, образ жизни и социализацию. Для определения роли виртуального общения в жизни молодежи с этой целью был проведен анализ литературы и документов, экспертный опрос, социологический опрос. В результате исследования стало ясно, что виртуальное общение имеет большое значение в жизни молодых людей и может вызвать у последних ряд социально-психологических проблем. Виртуальный контакт также вызывает определенную зависимость у указанной социальной группы, становясь нормой и лишая их визуального контакта и личных встреч.

Все это приводит к тому, что многие молодые люди становятся агрессивными, теряют способность справляться со стрессом, утрачивают чувство реальности и имеют сложные отношения с родителями и членами семьи. Неправильное использование виртуального взаимодействия также вредно для обучения. Большинство молодых людей проводят большую часть периода активной жизнедеятельности в различных социальных сетях, что не позволяет им физически участвовать в образовательных мероприятиях. Следует отметить, что виртуальное общение во многих случаях привлекает молодых людей, которые пытаются таким образом завести новых друзей и единомышленников.

Конечно, виртуальное общение – неотъемлемая часть современной жизни, и отказ от него можно считать практически невозможным, но этот способ общения должен быть сбалансированным, нельзя допускать, чтобы он становился образом жизни, заставляющим отказываться от личного общения. В этом контексте, на наш взгляд, велико влияние семьи и социального окружения. Молодой человек, злоупотребляющий виртуальными контактами, ни при каких обстоятельствах не должен оставаться наедине со своей проблемой, ему необходима психологическая поддержка, поддержка родных и друзей. Мы считаем, что трудности социализации в юном возрасте могут оказывать большое влияние на психологию человека, поэтому проблема содержит большие риски и требует серьезных исследований, системных копинг-механизмов, которые позволят тем или иным образом нейтрализовать пристрастие молодежи к данному виду общения.

Ключевые слова: *социализация, виртуальная реальность, интернет-зависимость, социальная сеть, коммуникация, медиаграмотность, молодежь, агрессия, стресс.*